Բ. Իբն Մասկավայ[1]:

237 թ. Հայաստանի բնակիչք յարձակեցան Իւսուփ Ի. Մուհամմեդ Ի. Իւսուփի վերայ. պատճառը հետեւեալն էր: Երբ Իւսուփ եկաւ իւր գաւառը, որ Հայաստանի մի մասն կը կազմէր, (Նորա մօտ) գնաց իշխաններից մէկը Բագարատ[2] որդի Աշոտի, որ իշխանաց իշխան անունը կը կրէր. նա խնդրեց Նորանից հովանաւորութիւն, բայց Իւսուփ Ի. Մուհամմեդ ձերբակալեց Նորան եւ կապանքների մէջ ուղարկեց Սուլթանի դուռը, ուր Բագարատ իւր որդու հետ ընդունեց իսլամ: Բագարատի՝ որդի Աշոտի՝ եղբօր որդին եւ Հայաստանի բոլոր իշխանք միացան ընդդէմ Իւսուփի, դաշն կապեցին միմեանց հետ եւ երդուեցան արեամբ: Իւսուփի մտերիմք յորդորեցին Նորան չմնալ երկրում եւ հաղորդեցին Նորան բնակչաց Նորա դէմ դաւադրութեան մասին. սակայն նա չանսաց եւ մնաց. այն ժամանակ Նորան շրջապատեցին բոլոր կողմից: Զիւն իջաւ. երբ Իւսուփ քաղաքից դուրս գնաց, մինչ Նորա մարդիկ ցրուած էին գործով, բնակիչք ճակատեցան եւ սպանեցին Իւսուփին Նորա ուղեկիցների հետ միասին. Նորան, ով որ կռուին չէր մասնակցում, կ'ասէին՝ "Հանիր զգեստներդ եւ ապրիր մերկ". սոքա ձգեցին իրենց զգեստները եւ ապրեցան մերկ եւ բոբիկ. նոցանից շատերը մեռան ցրտից, իսկ ոմանց մատները ընկան, եւ ապրեցան:

---

1 Fragmenta historicorum Arabicorum, T. II, Ed. de Goeje, Brill, 1871, p. 546—548. Աբու Ալի Ի. Ահմեդ Ի. Մուհամմեդ Ի. Եաքուբ Ի. Մասկավայ, գանձապետ եւ մտերիմ սուլթան Ադուդադաուլայ Ի. Բոյեի, բանաստեղծ, փիլիսոփայ եւ բժիշկ, վախճանեցաւ խորին ծերութեան մէջ 421/1030 թ. (Wüstenfeld, Gesch. der Araber, 182; Abulfeda, Hist. anteis. Ed. Fleischer, p. 203.)

2 Հեղինակը տալիս է անունները Բ-ագրատ, իսկ Բելազուրի՝ Բիֆրատ եւ Բ-ագրատ ձեւը: